7128

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«23» 06 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 178 - 25

Նախաձեռնող՝ ***«Հայնախագիծ» ԲԲԸ***
ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝ ***Վարդենիս համայնքի Արփունք բնակավայրում կրթահամալիրի կառուցում***
Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 178-25
«23» հունիսի 2025թ.

Արփունք բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող	«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ
Փաստաթղթի տեսակը	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Կատեգորիա	Բ կատեգորիա
Տեղադրման վայրը	Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք, Արփունք բնակավայր

Ներածական մաս. Համաձայն «Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) և նախագծային փաստաթղթի՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Արփունք բնակավայրի վարչական տարածքում նախատեսվում է կառուցել կրթահամալիր (հզորությունը՝ 144 աշակերտ և մանկապարտեզի 40 սան):

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթարկվել որպես քաղաքաշինական գործունեության օբյեկտի կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Վարդենիսի համայնքապետարանի կողմից տրամադրված 2025թ. փետրվարի 10-ի N ՆԹ-0546-25 նախագծման թույլտվության հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականով գրանցված (ծածկագիր՝ 05-019-0033-0001) պետական սեփականություն հանդիսացող 1.25646 հա հողամասի սահմաններում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

Նկարագրական մաս. Դիտարկվող տեղամասը գտնվում է Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Արփունք բնակավայրի 5-րդ փողոց 3-րդ հողամասում: Տարածքում առկա են շինության հիմքերի տեսքով ավերակներ, որոնք քանդվելու են հողային աշխատանքների ընթացքում: Ծառաթփային բուսականությունը բացակայում է: Հողատարածքի հարևանությամբ գտնվում են բնակելի տներ (47-92 մ), քանդված շինությունների հիմքեր և ազատ հողատարածքներ: Հիմնական ճանապարհից գտնվում է 29 մ հեռավորության վրա:

Համաձայն ինժեներա-երկրաբանական ուսումնասիրության արդյունքների՝ գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը գտնվում է Սևանի լեռնաշղթայի հարավարևմտյան լանջերի ստորոտներին հարող փոքրաթեք ակումուլատիվ լանջերի վրա: Ռելիեֆի մակերևույթի բացարձակ նիշերը տատանվում են 2042-2049 մ սահմաններում: Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին կավճի հասակի հրաբխային հաստվածքը, կավճի և պալեոգենի կրաքարա-ավազաքարային շերտախումբը: Ստորգետնյա (գրունտային) ջրերը փորված հորատանցքերով մինչև 11.8 մ խորությունը չեն հայտնաբերվել: Նախագծվող շենքի հիմքերի կայունության վրա բացասաբար ազդող ֆիզիկաերկրաբանական պրոցեսներ ու երևույթներ չեն դիտարկվել:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքում բնության և (կամ) պատմամշակութային հուշարձաններ և հատուկ պահպանվող տարածքներ, ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չկան:

Կրթահամալիրի կառուցման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են.

- ✓ հողամասի ընդհանուր մակերես - 12564.60 մ² (100 %),
- ✓ կառուցապատման մակերես - 1995.00 մ² (15.88 %),
- ✓ կանաչապատման մակերես - 6853.50 մ2 (54.50 %),
- ✓ ճանապարհներ - 1277.80 մ²,
- ✓ մայթեր՝ բազալտե սալվածքով և բետոնե սալիկներով - 346,00 մ² և 441,00 մ²,
- ✓ բաց մարզադաշտ և մանկական խաղահրապարակներ - 1454,30 մ² և 150.80 մ²,
- ✓ ելք նկուղից - 14.20 մ²,
- ✓ ջերմոց - 32 մ²:

Համաձայն նախագծի՝ կրթահամալիրը նախագծված է չորս մասնաշենքերով, որոնք իրարից բաժանված են հակասեյսմիկ կարաններով:

Առաջին մասնաշենքը հատակագծում ունի ուղղանկյուն ձև և 27.6 x 20.0 մ առանցքային չափեր: Եռահարկ է, չունի նկուղային հարկ: Մասնաշենքում տեղադրված են տարրական, ներառական և շախմատի դասարանները, մարզասրահ-խաղասենյակը:

Երկրորդ մասնաշենքի /կենտրոնական/ առաջին հարկում տեղակայված են մուտքային հարթակը՝ թեքուղիներով, նախասրահը, հանդիսությունների դահլիճը, ճաշասրահը, կենտրոնական աստիճանը, տնօրենի աշխատասենյակը, մեկ վերելակ: Երկրորդ հարկում՝ ուսմասվարների /միջին և տարրական/ աշխատասենյակները և կաբինետները: Երրորդ հարկում՝ գրադարանը, լինգաֆոնային և այլ կաբինետներ: Կիսանկուղային հարկում տեղադրված է խոհանոցը՝ իր օժանդակ սենքերով:

Երրորդ մասնաշենքը եռահարկ է, մի հատվածում՝ երկհարկանի: Հատակագծում ունի 29.4 x 20.0 մ չափեր: Մասնաշենքում են գտնվում քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության կաբինետները: Նկուղային հարկում հրաձգարան է, սանհանգույցներ և օժանդակ տարածքներ:

Չորրորդ մասնաշենքը /մարզադահլիճ/ հատակագծում ունի ուղղանկյուն ձև և 26.0 x15.7 մ առանցքային չափեր: Մեկհարկանի է՝ մարզական գույքի սենյակով: Նկուղային հարկ չունի:

Ընդհանուր դպրոցի տարածքը ցանկապատվելու է մետղական ցանցով (ռաբիցա) 1.5 մ բարձրությամբ: Նախատեսվում է ճանապարհի ասֆալտապատում (4 մ լայնությամբ), մայթերի և սալվածքների սալարկում՝ բետոնե գունավոր մայթի սալիկներով, բազալտից եզրաքարերի տեղադրում, խաղադաշտի և սպորտհրապարակի հատակների իրականացում՝ հատուկ խառնուրդով, ռետինե ծածկույթով և արհեստական խոտածածկույթով:

Ելնելով տարածքի ռելիեֆից՝ կառուցվելու է երկու հենապատ:

Ջրամատակարարման և էլեկտրամատակարարման միացումներն իրականացվելու են նախատեսվող գործունեության համար տրամադրված տեխնիկական պայմաններին համապատասխան:

Բնակավայրը գազամատակարարված չէ: Ջերմամատակարարումը նախատեսված է ջրային, երկխողովականի, ջրի մեխանիկական շրջանառությամբ: Որպես ջեռուցման սարքեր՝ ընտրվել են ալյումինե ռադիատորներ՝ բացառությամբ սպորտսրահից, որտեղ տեղադրվելու են ջերմային օդամղիչներ: Տաք ջրամատակարարման համակարգը սնվելու է նկուղային հարկում տեղադրվող կաթսայատնից:

Նախատեսվող 400 կՎտ հզորության լրակազմ տրանսֆորմատորային ենթակայանն աշխատելու է չոր եղանակով, իսկ սպասարկումն իրականացվելու է «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից:

Կենցաղային կոյուղու ցանցը համակցված է: Կոյուղագիծը միանալու է տարածքում կառուցվող կոյուղու մաքրման Topac 100 սարքավորմանը (հզորությունը 3 լ/վրկ): Սարքավորումը կատարում է եռաստիճան մաքրում: Նախատեսվել է դրենաժային հորատանցք ավելցուկային ջրերի հեռացման համար:

Կրթահամալիրի տարածքում տեղադրվող արևային վահանակների զբաղեցրած մակերեսը կազմում է 2879,40 քմ, որը ներառված է ընդհանուր կանաչապատման մակերեսի մեջ /6853,50 քմ/, քանի որ վահանակները տեղադրվելու են հողագրունտի վրա և նախատեսվում է գազոնապատել: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 272 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսբջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 24 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար:

Դպրոցի տարածքում նախատեսվող ջերմոցն (32 մ^2) օգտագործվելու է բնագիտական առարկաների գործնական դասընթացների համար:

Կրթահամալիրն ապահովված է լինելու արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման և հակահրդեհային համակարգերով, էվակուացիոն ուղիներով:

Էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված իրականացվելու են արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում, թերմիկ դիմադրությամբ և արևաթափանցելիության փոքր տոկոս ունեցող պատուհանների տեղադրում և այլն:

Հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ (թեքահարթակ, սանհանգույց և այլն):

Շինարարության տևողությունը կազմում է 23 ամիս կամ 690 օրացուցային օր:

Նախապատրաստական փուլում կատարվելու են շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում՝ հետիոտն գլխաածկույթով, էլեկտրամատակարարում և ջրամատակարարում, շինանյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում, գիշերային լուսավորվածության ապահովում:

Շինարարության ընթացքում տեխնիկա-տրնասպորտային միջոցներից օգտագործվելու են մոբիլային վերամբարձ կռունկ, էքսկավատոր՝ կախովի սարքավորումներով, բուլդոզեր, գլդոն, ավտոբետոնապոմպ, ձեռքի գործիքներ և այլն:

Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, երեսապատման նյութեր և այլն:

Շինհրապարակում պահեստավորվելու և կայանվելու են շինանյութերը և շինտեխնիկան, տեղադրվելու են ժամանակավոր շինությունները և այլն: Շինանյութերը պահեստավորվելու են, իսկ բաց տարածքներում՝ տեղադրվելու են տակդիրների վրա՝ չգերազանցելով բարձրության նորմերը, սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ: Հողային և ջրային ռեսուրսների պահպանության նպատակով շինտեղամասի վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս

մասնագիտացված սպասարկման կետերում: Շինհրապարակում տեղադրվելու է մեքենաների անիվների լվանալու հարթակ:

Շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն շինարարական հրապարակին կից տեղադրվող 25 մ³ ծավալով պարզարան: Պարզարանում տեղի է ունենալու մեխանիկական նստեցում և պարզեցված ջուրն օգտագործվելու է արտադրական հրապարակի ջրցանման և մեքենաների անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը հեռացվելու է որպես շինաղբ:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով՝ մասնագիտացված ընկերության կողմից:

Նախատեսվող աշխատանքներից առաջացող հողային հանույթը կազմելու է 4050 մ³, որից՝ բուսահողը կազմելու է 1300 մ³, հողագրունտը՝ 2750 մ³, հետլիցքը՝ 825 մ³: Բուսահողը և հետլիցքի ենթակա հողային զանգվածը պահպանվելու են շինհրապարակում, փոշենստեցման համար պարբերաբար իրականացվելու է ջրցան:

Հիմնական թափոնատեսակը, որն առաջանալու է շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային չտեսակավորված աղբն է (բացառությամբ խոշոր եզրաչափերի 120 մ3) և շինարարական աղբը (300 մ3): Շինարարության փուլում առաջանալու են նաև այլ թափոններ, մասնավորապես՝ սև և գունավոր մետաղի ջարդոններ, յուղոտված ավազ, եռակցման խարամ և այլն: Շինարարական աղբը, այդ թվում փորման աշխատանքների ընթացքում վտանգավոր նյութերով չաղտոտված 1925 մ3 հողային զանգվածը, տեղափոխվելու են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Կենցաղային աղբը պայմանագրային հիմունքներով հավաքվելու է աղբահավաք տարողությունների մեջ և հեռացվելու է տարածքից՝ բացառելով տարածքում աղբի կուտակումը և այրումը:

Ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի (գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում՝ հրդեհաշիջման համար: Խմելու որակի ջուրը կմատակարարվի տարաներով՝ պայմանագրային հիմունքներով: Անիվների լվացման, ջրցանի, բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը իրականացվելու է ջրատար մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով:

Աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Հաշվետվությամբ նախատեսված բնապահպանական միջոցառումների իրականացման արդյունքում՝ շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը չի գերազանցի օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ-կենցաղային անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար տեղադրվելու են ժամանակավոր կառույցներ՝ ապահովելով շինհրապարակում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմաններ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացվելու է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է նաև բացօդյա մարզադաշտ (1454.30 մ²): Կանաչապատումն իրականացվելու է՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշմանը համապատասխան: Համաձայն հաստատված կանաչապատման հատակագծի՝ իրականացվելու է 6853.53 մ² մակերեսով կանաչապատում՝ ծառատնկման և սիզամարգի միջոցով: Տեղանքի ուսումնասիրությամբ և դենդրոլոգի խորհրդատվությամբ տնկվելու են՝ թխկի սրատերև կարմիր (10 հատ), գնդաձև իլենի (33 հատ), սյունաձև թույա (20 հատ),

բարդի արծաթափայլ (65 հատ): 1300 մ³ ծավալով հողի բերրի շերտի հանումը և պահպանումը, ինչպես նաև կանաչապատման նպատակով պահեստավորված բուսահողը չբավարարելու դեպքում բուսահողի ձեռքբերումն իրականացվելու է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ոռոգումն իրականացվելու է ցնցուղային եղանակով: Օգտագործվելու են ռետինե խողովակներ՝ ոռոգումն ամբողջությամբ կազմակերպելու համար: Ոռոգման համակարգը սնվելու է տարածքում նախատեսված ռեզերվուարից, որում կուտակվելու է մաքրման սարքավորման միջոցով մաքրված ջուրը:

Հաշվետվությունում ներկայացվել է նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները: Մշակվել են միջոցառումներ՝ հնարավոր ազդեցությունները կանխարգելելու / նվազեցնելու նպատակով: Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. ՀՀ դրամ, ամբողջ շինարարության ընթացքում՝ 700 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեության (կրթահամալիրի կառուցում) փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով:

Փորձաքննական գործընթացին մասնակել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Գեղարքունիքի մարզպետարանը, Վարդենիսի համայնքապետարանը: Հաշվետվությունը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Վարդենիս համայնքի Արփունք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվել է հանրային լսումներ, նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Կրթահամալիրի կառուցման նպատակն է՝ ուսուցումը կազմակերպել բարձր սեյսմակայունություն ունեցող, բարեկարգ և նոր չափորոշիչներով կառուցված շենքում: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է չկառուցապատված տարածքում, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները շինարարության փուլում լինելու են կառավարելի և կրելու են կարճատև բնույթ: Իրականացվող աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումներ և

ներառվել են բնապահպանական կառավարման պլանում, որոնց չբավարարման դեպքում իրականացվելու են հավելյալ միջոցառումներ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հետևել Հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական միջոցառումների կատարմանը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել հավելյալ միջոցառումներ:
2. Շինարարական աշխատանքները կատարել՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկը և ճանապարհների բեռնվածությունը:
3. Կանաչապատման աշխատանքներն իրականացնել՝ համաձայն հաստատված կանաչապատման նախագծի՝ ապահովելով Հաշվետվությամբ և նախագծային փաստաթղթով նշված կանաչապատման և բարեկարգման լուծումները:
4. Մշտադիտարկման արդյունքներով պայմանավորված՝ գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշման պահանջներով, ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների ապրելավայրերի հայտնաբերման դեպքում առաջնորդվել գործող օրենսդրական պահանջներով:
5. Շինարարության և շահագործման փուլերում թափոնների կառավարումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով և համաձայնեցված տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
6. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Արփունք բնակավայրում նախատեսվող կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ, առաջատար մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան